Հաստատում եմ

Տնօրեն _____ Ամսաթիվ՝ 31.08.2023թ

Կոտայքի մարզ, գ.Ակունք Ակունքի միջն. դպրոց 7-րդ դասարան

Դասղեկ՝ Անի Ճաղարյան 2023-2024 ուստարի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներածություն

7-րդ դասարանում սովորում է 32 աշակերտ՝ 17 աղջիկ, 15 տղա: Ունենք 2 գերազանցիկ և 12 հարվածային աշակերտներ, հետևաբար գերակշիռ են լավ սովորող աշակերտները: Դասարանը համախմբված է: Կոլեկտիվում ձևավորված է համերաշխ մթնոլորտ:

Ուսումնական տարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

1. Դասարանի կազմակերպչական աշխատանքներ.

Դասարանի կահավորում և մաքրության պահպանում: 2. Աշակերտների ինտելեկտուալ հմտությունների զարգացում, տարաբնույթ թեմաներով զրույցներ, քննարկումներ, բանավեճեր, էքսկուրսիաներ, որոնք կսերմանեն ընկերասիրություն, հայրենասիրություն, մարդասիրություն և ուշադրություն ազգային արժեքների և ավանդույթների նկատմամբ: 3. Զարգացնել քաղաքացիական արժեքներ և բարոյական դիրքորոշումներ:

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն _ Դպրոցականների հոգևոր զարգացման կարևոր ազդակ են սեփական ժողովրդի պատմության իմացությունը, նրա պատմաճարտարապետական հուշարձանների ճանաչումն ու արժևորումը: Անհրաժեշտ է անցկացնել զրույցներ, որոնք կբացահայտեն հավերժությունից եկող մեր ազգի բարոյական, հոգևոր, մշակութային, կրոնական ու ազգային անանց արժեքները:

Գեղագիտական դաստիարակչություն _ Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, ճաշակը և գեղեցիկը գնահատելու կարողություններ զարգացնելու նպատակով հաճախել թանգարաններ, արվեստի սրահներ, պատկերասրահներ և այլն: Ունկնդրել դասական և ազգային երաժշտություն:

Ռազմա_հայրենասիրական դաստիարակություն _

Առանձնահատուկ վերաբերմունք ձևավորել պետության, պետական խորհրդանիների նկատմամբ: Սերմանել և դաստիարակել աշակերտների մեջ

հայրենասիրություն, հայրենիքը խոսքերի փոխարեն գործով սիրելու կարողություն ու հմտություն:

Ֆիզիկական դաստիարակություն _ Հետևել, որ աշակերտները ֆիզկուլտուրայի դասերին մասնակցեն սպորտային համազգեստով: Նրանց ընդգրկել սպորտային տարբեր խմբակներուն: Զրույցներ անցկացնել առողջ սննդի, առողջ ապրելակերպի մասին:

Աշխատանքային դաստիարակություն _ Աշակերտներին ներգրավել դպրոցում կատարվող աշխատանքներում: Հետևել հերթապահությանը, կազմակերպվող շաբաթօրյակներին աշակերտների ակտիվ մասնակցությանը:

Բնապահպանական դաստիարակություն _
Դաստիարակել հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, հարգանք՝ պատմական հուշարձանների նկատմամբ:

Դպրոց-ընտանիք կապը _ Միջոցառումներ անցկացնել ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ:

Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, որոնց թեմաների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները, դասարանի և դպրոցի խնդիրները:

Ուս.շ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Զրույց դպրոցի կարգ ու կանոնի մասին		դասղեկ, աշակերտներ
II	Զրույց Խաչվերաց տոնի մասին		դասղեկ, աշակերտներ
III	Մտքերի փոխանակում <<Հայրենիք>> թեմայով		Դասղեկ, աշակերտներ
IV	Զրույց <<Ես ուզում եմ և կարող եմ>>		Դասղեկ, աշակերտներ
V	Քննարկում <<Լավագույն գիրքը>>		Դասղեկ, աշակերտներ
VI	Զրույց <<Ուսուցչի դերը աշակերտների կյանքում>>		Դասղեկ, աշակերտներ
VII	Զրույց <<Ընկերություր ուժ է>>		Դասղեկ, աշակերտներ

VIII	Կարևոր արժեքներ		Դասղեկ, աշակերտներ
IX	Բանավեճ՝ <<Ատարբերությունը և շահերի բախումը>> թեմայով		Դասղեկ, աշակերտներ
X	Երբ աշխատանքը միայն ուրախություն է		Դասղեկ, աշակերներ
XI	Զրույց << Իմ բնավորության լավ ու վատ կողմերը>> թեմայով		Դասղեկ, աշակերտներ
XII	Տեղեկատվական զրույց <<Ինչպես պաշտպանվել բնական աղետներից>>		Դասղեկ
XIII	Տեխնածին վթարներ		Դասղեկ զինղեկ
XIV	Տեխնածին վթարներ		Դասղեկ զինղեկ
XV	Գիտության դերը մարդու կյանքում		Դասղեկ, աշակերտներ
XVI	Հայկական եկեղեցական տոները և դրանց խորհուրդը		Դասղեկ, աշակերտներ
XVII	Անհատական պաշտպանության միջոցներ		Դասղեկ զինղեկ
XVIII	Անհատական պաշտպանության միջոցներ		Դասղեկ զինղեկ
XIX	<<Գիտելիքը ուժ է>>		Դասղեկ, աշակերտներ
XX	Կոլեկտիվ պաշտպանության միջոցներ		Դասղեկ զինղեկ
XXI	Աշակերտների գործողությունները տեխնածին վթարների ժամանակ		Դասղեկ զինղեկ
XXII	Ում կուզեի նմանվել		Դասղեկ, աշակերտներ
XXIII	Զրույց-քննարկում <<Մարդը բնության մասնիկն է>>		Դասղեկ, աշակերտներ
XXIV	Հայ մեծերը		Դասղեկ, աշակերտներ

XXV	Հարձակման ժամանակակից միջոցներ		Զինղեկ
XXVI	Պետական և ազգային արժեքներ		Դասղեկ, աշակերտներ
XXVII	Աշակերտների գործողությունները պատերազմի ժամանակ		Զինղեկ
XXVIII	Հայազգի հերոսներ		Դասղեկ, աշակերտներ
XXIX	Կոմիտաս, Թումանյան և հայոց մեծեր…		Դասղեկ, աշակերտներ
XXX	Զրույց <<Ինչ է ընկերությունը և ով է իսկական ընկերը>> թեմայով		Դասղեկ, աշակերտներ
XXXI	Հայկական հնագույն մշակույթի կոթողներ		Դասղեկ, աշակերտներ
XXXII	Հայ հոգևոր մշակույթը		Դասղեկ, աշակերտներ
XXXIII	Զրույց <<Այս ուստարվա իմ ձեռքբերումները>>		Դասղեկ, աշակերտներ
XXXIV	Իրավունք և պարտականություն		Դասղեկ, աշակերտներ